ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՄԱՐԶԸ	ԼՈՌԻ
ՀԱՄԱՅՆՔԸ	ՍՊԻՏԱԿ
ԲՆԱԿԱՎԱՅՐԸ	ՄԵԾ ՊԱՐՆԻ

1.ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Պարնին հին հայկական բնակավայր է, դա երևում է նրա ՆԻ վերջածանցից: Ինչպես Արմենի անվան կազմությունը ցույց է տալիս, որ այն՝ իբրև ցեղային երկիր, գոյություն է ունեցել հայկական լեռնաշխարհում Ուրարտական պետության անկումից շատ առաջ, այնպես էլ Պարնի անունը հին հայկական անուն է: ՆԻ նշանը հոգնակիի նշան է: Այդ նշանը կա հին հայկական և նույնիսկ նախահայկական տեղանունների մեջ: Օրինակ՝ Գառնի, Պտղնի, Բջնի, Արմանի, Բագրատունի, Արածանի, Գնունի, Արծրունի, Սյունի, Սահառունի, Ռշտունի, և այլն: Հավանական է՝ Պարնին իր անունը ստացել է Փամբակի գետահովտի տարածքի անվանումից, որը շրջապատված է մի քանի լեռնապարերով: Նրա հյուսիս-արևմուտքից ձգվում են Բազումի, իսկ հարավ արևելքից՝ Փամբակի լեռները, որոնք երեք պատով շրջապատում են Փամբակի գետահովիտը: Քանի որ Պարնին Փամբակի գետահովտի ամենահին բնակավայրն է, հավանական է, որ լեռնապարերից էլ ստացել է իր անունը: Գ. Ղափանցյանն իր մի աշխատության մեջ(Г. Капанцян - "Историко лингвистические работы") նշում է, որ ՊԱՐՆԻ նշանակում է լեռնապարերով պատած: Փամբակի կամ Բազումի լեռների ցանկացած գագաթից դիտելիս երևում է լեռների պարերով շրջապատված մի հովիտ: Հայտնի է նաև մեկ այլ վարկած, ըստ որի, առաջին անգամ գյուղում եկել և հաստատվել է մի մարդ, ով գյուղում կառուցել է տներ և աջակցել, որ մի քանի ընտանիքներ գան և հաստատվեն գյուղում: Այդ մարդուն իր մեծ արարքի համար կոչել են Մեծ Պարոն, որտեղից էլ առաջացել է գյուղի անվանումը՝ Մեծ Պարնի: Մեծ Պարնին՝ որպես բնակավայր, գոյություն է ունեցել անհիշելի ժամանակներից, որի մասին են վկայում Ծաղկաբեր գյուղից եկող գետի հունի մեջ և գյուղում շինարարության ժամանակ հայտնաբերված գերեզմաններն ու նյութական մշակույթի նմուշները: Հավանական է՝ մի քանի անգամ քանդվել ու նորից է վերաշինվել: Մինչև 18-րդ դարի վերջը և 19-րդ դարի սկիզբը Փամբակի գետահովտի հարթավայրում Մեծ Պարնիից բացի, հայկական բնակավայրեր եղել են, որոնց բնակիչները հավանաբար թշնամիների ասպատակություններից ոչնչացել կամ տեղափոխվել են ուրիշ բնակավայրեր: Մասնավորապես՝ գյուղի արևելյան կողմում գտնվում է բարձր բլուր, որ հաճախ պաշտպանել է բնակիչներին թշնամիներից: Գյուղում կա հին եկեղեցի (կառուցման տարեթիվը հայտնի չէ), որը վերանորոգվելուց հետո անվանակոչվեց Մեծ Պարնիի Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի և մատուռներ՝ սուրբ Սարգիս և սուրբ Հովհաննես(): Հարակից համայնքներն են՝Կաթնաջուր-2կմ, Շիրակամուտ-6կմ, Սարալանջ-4կմ, Հարթագյուղ-4կմ, Լուսաղբյուր-8կմ, Ծաղկաբեր-2կմ:
Նախքան 1988-ի երկրաշարժը գյուղում գյուղատնտեսությանը զուգահեռ գործում էին արդյունաբերական 2 արտադրամասեր՝ Արզնու բյուրեղապակու գործարանի մասնաճյուղը և կարի ֆաբրիկան, որոնք այսօր չկան: Դպրոցականները ուսուցումը շարունակում են նոր կառուցված 450 տեղանոց երկհարկանի միջնակարգ դպրոցում, որը վերանվանվել է գյուղի անվանի մարդկանցից մեկի՝ակադեմիկոս Միհեր Սիմոնի Մելքոնյանի անվամբ: Գյուղում գործում է մեկ առողջության կենտրոն մանկապարտեզ 60 երեխայի համար: Բարենպաստ կլիման հնարավորություն է տալիս զբաղվելու գյուղատնտեսությամբ: Հիմնական զբաղվածության ոլորտը դաշտավարությունն ու անասնապահությունն է, որոնց զարգացման համար ստեղծվել են բարենպաստ պայմաններ:

2.ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Մեծ Պարնի գյուղը գտնվում է Հայաստանի հանրապետության Լոռու մարզի հյուսիս արևմտյան մասում, այն համարվում է հայաստանի հնագույն բնակավայրերից և գտնվում է Գյումրի-Վանաձոր կենտրոնական մայրուղու 30-րդ կիլոմետրում, Սպիտակ քաղաքից 15կմ, իսկ մարզկենտրոն՝Վանաձորից 35կմ հեռավորության վրա: Գյուղի մոտով է անցնում Երևան-Թբիլիսի երկաթգիծը: Մեծ Պարնի Գյուղը տեղակայված է Փամբակ գետի աջ ափին՝

ծովի մակերևույթից 1680 մ բարձրության վրա:

3.ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը (մմ)	600-700
Օդի միջին ջերմաստիճանը հունվարին (0C)	-8-13
Օդի միջին ջերմաստիճանը հուլիսին (0C)	+21+26

4.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	ՍՊԻՏԱԿ
2. Բնակավայրի հեռավորությունը՝	
2.1) համայնքի կենտրոնից (կմ)	15
2.2) մայրաքաղաքից (կմ)	120
2.3) մարզկենտրոնից (կմ)	35
2.4) պետական սահմանից ուղիղ գծով (կմ)	34
2.5) նախկին շրջկենտրոնից (կմ)	15
2.6) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	2
2.6) մոտակա երկաթուղային կայարանից (կմ)	7
4. Բնակավայրի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	1680
5. Բնակավայրի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	66,35 / 6635,61
6. Սահմանակից համայնքների և/կամ բնակավայրերի անվանումները	Ծաղկաբեր, Կաթնաջուր, Շիրակամուտ, Գոգարան, Սարալանջ, Լուսաղբյուր, Հարթագյուղ
7. Բնակավայրի վարչական ղեկավարի հեռախոսահամարը	093-806990
8. Բնակավայրում փոստային բաժանմունքի առկայությունը(այո, ոչ), քանակը	Այո, 1
9.Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	այո
10. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	ոչ

5.ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

	2025թ.

1. Մշտական բնակչության թվաքանակը	1853
2. Գրանցված ծնունդների քանակը	21
2.Մահացության դեպքերի քանակը	12
3.Ամուսնությունների քանակը	12
4. Ամուսնալուծությունների քանակը	0
5. Տնային տնտեսությունների թիվը	564
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	78
7. Կենսաթոշակառուների քանակը	135
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	65

6.ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	01.01.2025թ.
1. Գրադարանների քանակը	-
2. Արվեստի դպրոցների քանակը	-
3. Երաժշտական դպրոցների քանակը	-
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	1
5. Հանրակրթական դպրոցների քանակը	1
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	-
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	-
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	-
9. Մարզադպրոցների քանակը	-

7.ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

	01.01.2025թ.
1. Բնակավայրի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ^2)	42580
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	-
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	490

8.ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	01.01.2025թ.
1. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	5726,92
2. Բնակավայրերի հողեր (հա)	184,27
3. Արդյունաբերական, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների	81,94

4. Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյետներ	83,36
5. Հատուկ նշանակության	-
6. Հատուկ պահպանվող տարածքների	16,54
7. Անտառային	470,35
8. Ջրային	30,54
9.Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	967
10. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	69
11. Խոզերի գլուխաքանակը	68
12. Գյուղատնտեսական տեխնիկա	46
12.1 տրակտորներ (քանակը)	38
12.2 կոմբայններ (քանակը)	8
13. Գյուղացիական տնտեսությունների թիվը	556

9.ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	6
2. Բնակավայրի գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	այո
3. Բնակավայրի աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	ոչ
4. Բնակավայրում գերեզմանատան առկայությունը (այո, ոչ)	այո
5. Ներբնակավայրային ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	30
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	ոչ
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	15
6.2 Էքսկավատորների քանակը	0
6.3 Թրթուրավոր տրակտորների քանակը	4
6.4 Գրեյդերների քանակը	0
6.5 Աղբատար մեքենաների քանակը	0
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	0
6.8 Վակումային փոշեկուլ մեքենաների քանակը	0
6.9 Ավտոաշտարակների քանակը	0
7. Բնակավայրի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	10
8. Բնակավայրի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	0
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	ոչ
10. Ներբնակավայրային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	ոչ

10.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

	01.01.2025թ.
1. Բնակավայրում համայնքապետարանի աշխատողների թվաքանակը,	6
որից՝ 1.1 համայնքային ծառայողներ	2
2. Բնակավայրի բնակիչ ավագանու անդամների թվաքանակը	2

11. ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը (նկարագրությունը)	Ակնկալվող լուծումը և լուծման ժամկետները
Ոռոգման ջրի ներտնտեսային ցանցի բացակայություն	Ներտնտեսային ցանցի կառուցում: 1-2տարի
Տնակային պայմաններում ապրողների առկայություն	Տների կառուցում< 1-2 տարի
Դպրոցի մարզադահլիճի բացակայություն	Դպրոցի մարզադահլիճի կառուցում
Ներհամայնքային ճանապարհների անբարեկարգ վիճակ	Ներհամայնքային ճանապարհների տուֆով սալարկում, ասֆալտապատում